որոնք ծածկուած են այն մարդկային անթիւ մրջնոցներուն մէջ, և բուռն փափաք մի կը զգաս դուրս ելնելու անտի, բաց օդին մէջ, մի մենաւոր գիւղի մէջ՝ զոր Թերևս տասը տարի առաջ անցողակի տեսեր ես կառքի մի փոքրիկ պատուհանէն։

Մի անգամ, կայարանի մի մօտ գտնուելով, ուզեցի շրջագայութիւն մ'ընել ստորերկրեայ երկաթուղեաւ։ Երկու կամ երեք փողոց վար կ'իջնեմ, և ահա յանկարծ ցորեկէն գիշերուան մէջ կը խորասուզիմ. լոյսեր, բազմութիւն մարդկան, աղմուկ, շոգեշարժ կառախումբք՝ որք կը հասնին և որք կ'անհետանան մթութեան մէջ։ Կը հասնի իմս՝ որով պիտի երթամ, կանգ կ'առնու, բազմութիւն մարդիկներու՝ որք վայր կը գահավիժին, և բազմութիւն մարդիկներու՝ որք շոգեկառաց մէջ կը նստուին. և մինչ կը հարցընեմ ես թէ ո՛ւր են երկրորդ կարգի օթեակներն, կառախումբն մեկներ է արդէն։ — Այս ի՞նչ բան է, կ'ըսեմ ես պաշտօնեաներէ միոյն. — Մի՛ շփոթիր, կը պատասխանէ նա, ահա ուրիշ մ'այլ։ — Անոք կառախումբք չեն յաջորդեր, այլ իրարու ետևէ կը վազեն։ Կը հասնի միւս կառախումբն, վեր կը նետուիմ, և նետի պէս կը սուրայ՝ կ'երթայ։ Այն պահուն բոլորովին նորօրինակ տեսարան մի կը սկսի։ Կը վազենք քաղաքին հիմանց միջէն, անծանօթին մէջ։ Նախ թանձր մթութեան մէջ կ'ընկղմինք, յետոյ վայրկեան մի կը տեսնուի ցորեկուան սկար լոյսը, վերջը դարձեալ մթութեան մէջ, յորում ասս անդ լուսոյ տարօրինակ ցոլմունք կը փայլատակեն. յետոյ ակնթարթի մէջ երևցող և անհետացող կայարանի մի հազարաւոր լոյսերն. կառախումբք՝ որք կ'անցնին և չեն տեսնուիր. յանկարծական դադարում մի, սպասող բազմութեան մի հազարաւոր դէմքերն՝ որք իբր հրդեհի մի ցոլացումէն լուսաւորուած են. յետոյ դարձեալ խլացուցիչ շառաչ մի զարնուող գռնակաց, զանգակաց, մեքենայից փչումներու. վերջը ուրիշ մթութիւնք, ուրիշ կառախումբք, ուրիշ փայլփըլմունք լուսոյ, ուրիշ լուսաւորուած կայարանք, ուրիշ բազմութիւնք մարդկանց՝ որք կ'անցնին, կը հասնին, կամ կը հեռանան, մինչև որ կը հասնինք վերջին կայարանը. վայր կը ցատքեմ. կառախումբն կ'անհետանայ. դէպ ի դուռը կը մղուիմ. սանդուղէն կէս մի ուրիշներէն վեր կը տարուիմ, վերջապէս ցորեկուան լոյսը կը տեսնեմ...։ Բայց ո՞ւր եմ, ի՞նչ քաղաք է այս, ի՞նչպէս դուրս պիտի ելնեմ աստի։ Կամա՛ց. նախ գարեջրատուն մ'երթանք՝ քաղաքին յատակագիծը քննելու և տեղեկանալու համար։

Շարայարելի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Շնորհակալութեամբ ստացանք ազգային հետևեալ նոր հրատարակուած գրեանքը:

1, Ուիդա Մուֆլու. Թրգմ. Ռուսերէնից՝ Յովհ. Օհանեան. (Թիֆլիսի Հայոց հրատ. ընկեր. N.° 107) 1896, տպեալ ի Տփղիս, Տպրն. Մ. Շարաձէի. գինն է 10 կոպ.

2. Աներևոյթ հողագործ. — Ռուսերէնից փոխադրեց՝ Մելիք-Ադամեան. (Թիֆլիսի Հայոց հրատ. ընկեր. N° 108) 1896, տպեալ ի Թիֆլիս, տպրն. Վրաց հրատ ընկեր.) գինն է 7 կոպ.

3. Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի պատմութեան. գրեց Ստեփ. Մալխասեան, 1896, գինն է 50 կոպ.

4. Գրիգորեան Գր. քահ. — Սոխակ Հայաստանի. ազգային լիակատար երգարան հտ. Ա. չորրորդ տպգր. Մոսկուա 1895, գինն է 1 ռ. 24 կոպ.

5. Բայրըն. — Շիլիոնի կալանաւորը. Թրգմ. Յով. Թումանեանց (Հրատ. Փիլիպպոս Վարդազարեանի) 1896, տպեալ ի Թիֆլիզ, Տպրն. Յ. Մարտիրոսեանցի. գինն է 10 կ.

digitised by A.R.A.R.@